

**ՍԵՐԵՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ ԿԻՑ ԱՆԱՆՈՒՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՄԻ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀԱՐԱԿԻՅ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ**

ԼԵՂՈՆ ՇԱՀԻՆՅԱՆ

Սերբոսի Պատմությանը կից Ա և Բ գլուխների հեղինակը¹ Ա գլխի, այս-
պիսի կոչված, խոստաքանության մեջ ընթերցողին է ներկայացնում իր գրելիք
աշխատության բովանդակությունը²։ Այստեղ մեզ հետաքրքրողը հայոց և
պարթևաց հինգ թագավորների մասին նշումն է, որը պատմագիտական-բա-
նասիրական ուսումնասիրություններում երկու բացատրություն է ունեցել։
Հարցին անդրադարձած գիտնականների մեծ մասը (Ա. Գուտշմիդ³, Ն. Մառ⁴,
Հ. Թոփչյան⁵, Ն. Ադոնց⁶, Ն. Ակինյան⁷, Ստ. Մալխասյան⁸) համոզված է եղել,
որ «հինգ» բառը բնագրային է, այսինքն հետագա փոփոխության չի ենթարկ-
վել, ուստի և փնտրել են համապատասխան հինգ թագավորներին և առա-
ջարկել են դանադան հնգյակներ։

Քանի որ ուսումնասիրողների փորձերն ավարտվել են սոհաջողությամբ,
ալիքի ճիշտ, չեն համոզել, որոշ հետազոտողներ ընտրել են հարցալուծման
ևրկրորդ, կարելի է ասել, ավելի հեշտիսգնա ուղին։ Ենթադրել են, որ «հինգ»
ոտոր գրչական սխալ է և դրա փոխարեն առաջարկել են «հին»՝ նախնի, առա-
ջին իմաստով։ Այսպիսի թեական կարծիք է հայտնել Ք. Պատկանյանը⁹, որը
հետագայում կրկնել են Ա. Աննինսկին¹⁰, Ա. Մատիկյանը¹¹ և ուրիշներ, իսկ
ամենավերջում՝ Գ. Աբգարյանը։

¹ Այս հեղինակին, ինչպես մեկ այլ առիթով նշել ենք («Բանբեր Մատենադարանի», 1967, խ. 8, էջ 28) կոչելու ենք Անանուն Ա՝ Սերբոսի Պատմությանը կից Գ, Դ գլուխների դարձյալ Անանուն հեղինակից զանազանելու համար։

² «Սերբոսի եպիսկոպոսի պատմություն», Երևան, 1939, էջ 1—2։

³ A. Gutschmid, Über die Glaubwürdigkeit der Armenischen Geschichte des Moses von Khoren, Leipzig, 1876 (հայերեն թարգմ. տե՛ս «Բաղմավեպ», 1877, էջ 293, ծան. 3)։

⁴ H. Marr, O «Начальной истории Армении» Анонима («Византийский временник», 1894, № 1, էջ 279—280)։

⁵ Հ. Թոփչյան, Նկատողություններ Ազաթանգեղոսի և Փավստոսի մասին («Արա-
րատ», 1901, № 11—12)։

⁶ Н. Адонц, Начальная история Армении у Себеоса... («Византийский временник», т. VIII, вып. 1—2, СПб, 1901, էջ 75, ծանոթագրություն)։

⁷ Ն. Ակինյան, Սերբոսի եպիսկոպոսի Բագրատունյաց և յուր պատմությունն ի Հե-
րակին, Մատենադարանի հետազոտություններ, հ. Բ, Վիեննա, 1924, էջ 48-ի ծանոթագրու-
թյունը, նույն ի՝ Սերբոսի «Ժամանակագիրն» և Փ. Բյուզանդեա Ա պատմությունը («Հան-
դես ամսօրյա», 1938, № 1—3, էջ 23—24)։

⁸ Ս. Ադոնց, Առաջարան, էջ ԽԾ, նաև՝ էջ 159—161, ծան. 2, էջ 162—163, ծան. 5։

⁹ «История императора Иракла. Сочинение Себеоса...», перевод с армянского К. Патканян, СПб, 1862, էջ 1, ծան. 3։

¹⁰ А. Аннинский, Древние армянские историки как исторические источники, Одесса, 1889, էջ 127։

¹¹ Ա. Մատիկյան, Անանունը կամ կեղծ Սերբոս, Վիեննա, 1913, էջ 68։

Եթե նախորդները տվյալ հարցում բավարարվել են սոսկ նշումով, Գ. Աբգարյանն աշխատել է փաստարկել, հիմնավորել «հինգ»-ը «հին» բառով փոխարինելու անհրաժեշտությունը¹²։

Այսուհանդերձ, հետազոտություններից պարզվում է, որ ճիշտ չէ Գ. Աբգարյանը, ինչպես նաև նախորդները, երբ առաջարկում են «հինգը» «հինս հասկանալ, այսինքն՝ խոստաբանության մեջ հիշված «հինգ թագավորներին» փոխարեն՝ «հին թագավորներ»։ Այս անճշտությունը, մեր կարծիքով, հետևվանք է առանձին փաստերի անտեսման, որը դժվարացրել և դրեթե անհնար է դարձրել նշված հինգ թագավորների, այսպես ասած, հայտնաբերումը։ Իսկ ինչ փաստեր նկատի ունենք։

Առաջինը. շնայած Գ. Աբգարյանը համոզիչ փաստերով և, մեր կարծիքով, անառարկելիորեն ապացուցել է, որ Սեբեոսի Պատմությանը կից առաջին չորս գլուխները (գլ. Ա—Դ) Սեբեոսին չեն պատկանում, պատահաբար են միացել նրա գործին և սլլն, սակայն չի ասել, որ դրանք մեկ հեղինակի գործ չեն, այսինքն՝ խոստաբանության հեղինակին, որ սրան պետք է հատկացնել միայն Ա և Բ գլուխների շարադրանքը։

Երկրորդ. ինչպես նախորդ ուսումնասիրողները, այնպես էլ Գ. Աբգարյանը իրավացիորեն նկատել են, որ Սեբեոսի Պատմությանը կից այս գլուխներում (հատկապես Ա և Բ գլուխներում) կան աղավաղումներ, պակասավոր տեղեր, զրչազրական սխալներ և այլն, շատ բաներ էլ նրանք սրբագրել, ճշգրտել են, սակայն առայժմ չի կարելի բնագիրը վերականգնված համարել։ Ինչպես կտեսնենք, դեռևս կան պակասավոր տեղեր, այլ կարգի աղավաղումներ, որոնց հետ սերտորեն կապված է մեզ հետաքրքրող հարցի լուծումը։

Յուրրորդ. հինգ թագավորներին փնտրելիս նախորդ ուսումնասիրողները, այդ թվում նաև Գ. Աբգարյանը, կարևորություն չեն ավել Մ. Խորենացու մոտ առավել անաղարտ պահպանված մարաբասյան համապատասխան տեղեկություններին։ Այսինքն այն աղբյուրին, որից օգտվել է նաև խոստաբանության հեղինակը։

Չորրորդ. խոստաբանության մեջ համարյա բացահայտ ասված է, որ առաջիկայում կիսովի հայոց և սլարթևաց առաջին հինգ թագավորների մասին, ուսումնասիրողները փնտրել են ուրիշ երկրների և ուշ ժամանակների զահակալներ։

Այժմ՝ այս հարցերի մասին առավել հանգամանորեն։

Այն բանը, որ Սեբեոսի Պատմությանը կից Ա և Բ գլուխների հեղինակը Գ և Դ գլուխների հեղինակը չէ, հաստատվում է հետևյալ փաստերով։

ա) ¹³ Գլուխը ավարտվում է պարթև ու հայ Արշակունիների արքայացանկերով, ուր հերթականությամբ նշված են յուրաքանչյուրի զահատարիները։ Գ գլխի հեղինակը անհավաստի համարելով Բ գլխի այդ արքայացանկերը, գրում է. «Արդ՝ քչ պիտոյ է Բեզ, ով քնթերցասլւր, երկրորդեցից ի պատմագրացն Մովսիսի Խորենացույ եւ Ստեփաննոսի Տաւաւնացույ, հաւաստի եւ նշմարիտ մատենագրաց՝ զորդի ի հաւել նանաչել»։ Այս վերնագրից հետո բերված է պարթևների արքայացանկը (հայ Արշակունիներինը կորած է), որը

¹² Գ. Աբգարյան, «Սեբեոսի պատմությունը և Անանուի առեղծվածը, Երևան, 1965, էջ 41, հմմտ. էջ 34—36։

շատ էական պծերով տարբերվում է Բ գլխի տվյալներից: Այլ կերպ ասած, Ի գլխի հեղինակը անհավաստի համարելով Բ գլխի հեղինակի տվյալները, հարկադրված է եղել կրկնելու նույն արքայացանկերը: Եթե Գ գլխի հեղինակը Բ գլխինը լիներ, պարզ է, այսպիսի քայլի չէր դիմի, չէր հակադրվի ինքն իրեն:

բ) Բ գլխում բերված հայ Արշակունիների արքայացանկը սկսվում է Վաղարշակով և ավարտվում է Արշակի որդի Պապ թագավորով: Հայ Արշակունիների մի մասը՝ սկսած Խոսրով Քաջից մինչև նրանց վախճանը, կրկնված են Գ գլխի եռաշար աղյուսակում: Եթե այդ գլուխները նույն հեղինակինը լինեին, նման կրկնություն չէր լինի, կլիներ կամ մեկը, կամ մյուսը:

գ) Բ գլխում Խոսրով Քաջից սկսած հայ Արշակունիների գահատարի-նեըը խոստովեն տարբերվում են Գ գլխի եռաշար աղյուսակում հիշված միև-նույն արքաների գահատարիներից: Այսպես՝

Բ գլխում		Ի գլխում	
Ա Ն Ու Ն Ը	Գահատարին	Ա Ն Ու Ն Ը	Գահատարին
Խոսրով Քաջ	ԽԸ	Խոսրով Քաջ	ԽԸ+3 (51)
Տրդատ Մեծ	ՄԶ	Տրդատ	Ղ (70)
Խոսրով՝ որդի Տրդատայ	Թ	Խոսրով՝ որդի Տրդատայ	ԺԸ (17)
Տիրան՝ որդի Խոսրովայ	ԽԸ	Տիրան՝ որդի Խոսրովայ	ԺԲ (12)
Արշակ՝ որդի Տիրանայ	Է	Արշակ՝ որդի Տիրանայ	ԼԹ+10 (49)
Պապ՝ որդի Արշակայ	Է	Պապ՝ որդի Արշակայ	ԺԳ (13)
Ման. Բ գլխում Պապ թագավորով ավարտվում է արքայացանկը		Ման. Գ գլխում շարունակվում է արքայացանկը՝ ներառյալ Վաղարշակով, որը համարվել է հայոց վերջին թագավոր	

Բերված փաստերը ապացուցում են, որ Դ գլուխն ամբողջությամբ, ինչպես նաև Դ գլխի երկշար աղյուսակը, որը Ի գլխի եռաշար աղյուսակի օրգանական շարունակությունն է, Ա և Բ գլուխների հեղինակի գրչին չեն պատկանում: Եվ քանի որ այդպես է, Ա գլխի խոստաբանության մեջ հիշված ճինգ թագավորներին պետք է փնտրել Ա և Բ գլուխների շարադրանքում միայն:

Այժմ անդրադառնանք Ա և Բ գլուխների շարադրանքի բնագրական քննությանը, սկսելով մեր խոսքը խոստաբանությունից:

Նախապես ասենք, որ այս հատվածը բազմիցս քննության է առնվել, տարբեր ուսումնասիրողներ տարատեսակ սրբագրություններ են առաջարկել, սակայն բոլորից հիմնավորը և նախընտրելին Դ. Արզարյանի հետևյալ սրբագրություններն են.

- ա) Բնագրի սկզբի զանտաբագրել բառը կարդալ զանտոբագրեալ:
- բ) 13-րդ տողում վերաբերութեան բառը ուղղել վերաբերութիւն:
- գ) 15-րդ տողում Անդր բառը կարդալ Անդ:
- դ) էջ 2-ի 2-րդ տողում՝ լստղիպան բառը ուղղել աստղիպան:
- ե) էջ 2-ի 6-րդ տողում՝ այսու ունէր արտահայտությունը ուղղել՝ այս ունէր:

խոստաբանության շարադրանքում Գ. Աբգարյանի մյուս ուղղումներն անրնդունելի են, քանի որ փոխում են բնագրի իմաստը: Դրանք են՝ «հինգ»-ը՝ «հինս»-ով փոխարինելը, Մծրինը Մծուրն կարդալը և «ի մատեանս Մարաբայ փիլիսոփայի Մծուրնացւոյ, զոր եղիտ զրոշմեալ ի վերայ արձանի» նախադասության մէջ՝ Մծուրնացւոյ բառից հետո՝ [յարձանագիրն] բառի ավելացումը¹³:

Վերը նշված բնդունելի սրբադրություններից զատ, մեր կարծիքով, խոստաբանության մէջ պետք է կատարել մի կարևոր ուղղում ևս, որը բխում է խոստաբանության ամբողջ շարադրանքի պահանջներից: Այսպես՝ առաջին պարբերության վերջում գրված է. «... և ցուցից համառատիւք զարդեաց ժամանակացս զաղետիցս վերաբերութիւն դամս և զաւուրս հինգ թագաւորացն յիշատակելովս: Ստացվում է, որ հեղինակի նպատակներից մեկն էլ իր աղետալի ժամանակների հինգ թագավորների մասին գրելն է, ինչպես հասկացիլ են Ուտ. Մալխասյանցը և ուրիշները: Հիմնականում նրանք, ովքեր Ա և Բ գլուխները Սեբեոսի Պատմության օրգանական մասերն են համարել, Իրականում այդպես չէ: Հաջորդ պարբերություններում հեղինակը հանգամանորեն բացատրում է, թե որտեղից է պատմելու այդ հինգ թագավորների մասին և ովքեր են նրանք, որը և, մեր համոզմամբ, խոստաբանության հետագա ամբողջ շարադրանքի զրդապատճառն է:

Պարզվում է, որ դրանք հայոց և պարթևաց առաջին հինգ թագավորներն են՝ ըստ մարաբայան մատյանի ու, այսպես կոչված, աղաթանգեղյան արձանագրության, և ոչ հեղինակին ժամանակակից հինգ թագավորներ: Այսպիսով, առկա է ակնհայտ հակասություն նույն հեղինակի շարադրած առաջին պարբերության և հաջորդ շարադրանքի միջև, որը նկատելի են Ն. Մառը, Ուտ. Մալխասյանցը, Գ. Աբգարյանը և ուրիշները:

Ըստ Մալխասյանցի, առաջին պարբերության հինգը պետք է հինգ հասկանալ, իսկ երկրորդ հինգը սրբագրել հին բառով, որը, իբր, կվերացնի հակասությունը¹⁴: Սկսում ենք իբր, որովհետև այդ ենթադրությամբ խոստաբանության ամբողջ շարադրանքն առաջին պարբերությունից հետո դառնում է ավելորդ, ոչ մի արժեք չունեցող բացատրություն: Ուրեմն, ամենևին էլ հակասության յուծում չէ:

Այս հակասությունը վերացնելու նպատակով Ն. Մառը առաջարկել է առաջին պարբերության «վերաբերութիւն» բառից հետո (էջ 1, տող 13) դնել վերջակետ, իսկ նախադասության շարունակություն համարված՝ «զամս և զաւուրս հինգ թագաւորացն յիշատակելովս» միտքը տանել հաջորդ պարբերության սկիզբ, որից հետո շարունակել «անդ հայիլով մատեանս Մարաբայ փիլիսոփայի Մծուրնացւոյ...» և այլն: Ն. Մառի մոտ հիշյալ հատվածը վերաշարադրված է այսպես. 1. «...и поведаю о последующих событиях и изложу вкратце постигающие (нас) в настоящее время бедствия».

2. «Годы и дни пяти царей я расскажу, глядя ту историю (մատեան) Низибитского философа Мараби» և այլն¹⁵:

¹³ Գ. Աբգարյան, նշվ. աշխ., էջ 136—142:

¹⁴ Սեբեոս, էջ 160, 162—163:

¹⁵ Н. Марр, նշվ. աշխ., էջ 250:

Ն. Մառի այս առաջարկը պետք է ընդունելի համարել հետևյալ պատճառներով. նախ՝ վերանում է խոստարանության շարադրանքի վերը նշված հակասությունը, ապա հնարավոր է դառնում որոշակի դարձնել, իմաստավորել Անանուն Ա-ի հետևյալ անորոշ միտքը՝ «Անդր հայելով ի մատենան Մարաբայ փիլիսոփայի Մծուրնացույ, զոր եղիտ դրոշմեալ ի վերայ արձանի ի Մծրին քաղաքի, յապարանսն Սանատրուկ արքայի, հանդէպ դրան արքունական տաճարին, ծածկեալ յաւերածի արքունական կայննիցն»:

Ինչպես տեսնում ենք, այստեղ շատ բան է ասված, անգամ հնագիտական մանրամասներ, սակայն չկա կարևորը, որն ամբողջական կդարձնէր նախադասության իմաստը, այսինքն՝ ի՞նչ է նայել հեղինակը Մարաբայ Մծուրնացու (Մծրնացու) մատյանում կամ ինչի՞ մասին էր գրելու ըստ այդ մատյանի, որի առթիվ այդքան երկար քաջատրություն է տալիս:

Տվյալ հատվածի շրջանակներում հարցին պատասխանելն անհնար է, իսկ եթե ընդունում ենք Ն. Մառի առաջարկը, պարզվում է, որ Մարաբայի մատյանը նայելով՝ հեղինակը հիշատակելու, պատմելու է հինգ թագավորների մասին: Ուրեմն, «զամս և զաւուրս հինգ թագաւորացն յիշատակելով (ճիշտը՝ յիշատակեցից)» միտքը վերաբերում է այս հատվածին և ոչ առաջին պարբերության վերջին նախադասությանը, թեկուզև այն պատճառով, որ հեղինակը սլակասավոր, անորոշ միտք չէր շարադրի:

Այսուհանդերձ, ի հավելումն Ն. Մառի ենթադրության, կարծում ենք, որ նույն միտքը «զամս և զաւուրս հինգ թագաւորացն յիշատակելով» պետք է եղած լինի նաև առաջին պարբերության մեջ, սակայն ռասացից զառ ի յապայսն եղելոյ» մտքից հետո, բանի որ երկրորդ պարբերության վերը նշված լրացումով, որն անխուսափելի պահանջ է, հինգ թագավորներն արդեն մեկ անգամ հիշված են թվում:

Այս ուղղումներով ու սրբագրումներով, որոնք ընդգծվելու են, խոստարանությունը կունենա հետևյալ շարադրանքը. «Եւ եղև ոչ ի կամայական պիտոյից վարժ խուղակի զաւնտուրագրեալ ժամանակ և զնախնի քաջացն ձեռնարկելով դրոշմել վիպասանութիւնս, զիմն յիշատակել զառսպելս, և ի նոյն շարադրելով ասացից զառ ի յապայսն եղելոյ» (զամս և զաւուրս հինգ թագաւորացն յիշատակելով). և ցուցից համառատիւր զարդեաց ժամանակացս զաղետիցս վերաբերութիւն:

Զամս և զաւուրս հինգ թագաւորացն յիշատակեցից¹⁶ անդ հայելով ի մատենան Մարաբայ փիլիսոփայի Մծուրնացույ, զոր եղիտ դրոշմեալ ի վերայ արձանի ի Մծրին քաղաքի, յապարանսն Սանատրուկ արքայի, հանդէպ դրան արքունական տաճարին, ծածկեալ յաւերածի արքունական կայննիցն:

Քանզի զսիւնս տաճարին այնորիկ խնդրեալ ի դուռն արքային Պարսից, և բացեալ զաւերածն վասն սէանցն՝ աստ ղիւզան արձանագրին, դրոշմեալ ի վերայ վիմի զամս և զաւուրս հինգ թագաւորացն Հայոց և Պարթևաց յունարէն զայրութեամբ. զոր իմ գտեալ ի Միջագետս ի նորին աշակերտացն կա-

16 Ինչպես տեսանք, «յիշատակելով» բառը «յիշատակեցից» ձևով օգտագործել է նաև Ն. Մառը իր ուսման թարգմանության մեջ՝ «Я расскажу», որը համահնչյուն է ոչ միայն տվյալ հատվածի, այլ ամբողջ խոստարանության շարադրանքին՝ թե՛ լեզվական և թե՛ իմաստային առումով:

մեցայ ձեզ գրուցակարգել. քանզի այս ունէր վերնագիրն այսպէս.

«Ես Աղաթանգեղոս գրիչ գրեցի ի վերայ արձանիս այսորիկ իմով ձեռամբս դամս առաջին թագաւորացն Հայոց, հրամանաւ քաջին Տրդատայ՝ առեալ ի դիւանէ արքունիս: Զոր փոքր մի և ապա յիւրում տեղւոջն տեսցես զպատճենն»:

Թարգմանենք.

«Եւ այսպէս հմուտ հետադոտողի քմահաճ ցանկությամբ չէ, որ ձեռնարկում եմ գրել չգրված ժամանակի և նախնի քաջերի պատմությունը, հիշատակել որոշ առասպելներ. նույն կերպ շարադրելով կպատմեմ (նաև) դրանից հետո եղածը՝ հինգ թագավորների օրերն ու տարիները հիշատակելով, և համառոտակի ցույց կտամ ներկա ժամանակների աղետների վրա հասնելը»:

Հինգ թագավորների օրերն ու տարիները կհիշատակեմ՝ նայելով Մարաբա փիլիսոփա Մծուրնացու (=Մծբնացու—Լ. Շ.) մատյանը, որ դտա Մծբին քաղաքի արձանի (=սյան) վրա դրոշմված¹⁷, Սանատրուկ արքայի ապարանքում, թագավորական տաճարի դռան դիմաց արքունական շինությունների ավերակում ծածկված:

Քանի որ այդ տաճարի սյուները պահպանչեցին պարսիգ արքայի դուռը և (երբ) այդ սյուների պատճառով բացեցին ավերակները, այստեղ հանդիպեցին արձանագրությանը՝ դրոշմված վեմի վրա, հայոց և պարթևաց հինգ թագավորների օրերն ու տարիները՝ հունարեն գրությամբ: Եվ ես՝ նրա աշակերտներից, որ գտնվում էի Միջագետքում, կամեցա ձեզ պատմել, որովհետև սա (արձանագրությունը—Լ. Շ.) ունեւ այսպիսի վերնագիր.

«Ես՝ Աղաթանգեղոս գրիչ, Տրդատ Քաջի հրամանով այս արձանի վրա իմ ձեռքով գրեցի հայոց առաջին թագավորների տարիները՝ տոնելով արքունի դիվանից»: Որի պատճենը մի փոքր հետո իր տեղում կտեսնես»¹⁸,

Այժմ քննենք խոստաբանության բնագիրն ըստ առանձին մասերի կամ՝ ըստ պարբերությունների:

Առաջին պարբերության մեջ հեղինակը ընթերցողին հայտնում է իր գրելիք պատմության համառոտ բովանդակությունը՝ թե ինչի՞ մասին է գրելու իմանում ենք, որ այն բաղկացած էր լինելու հրեք մասից: Նախ, պատմելու է չգրված ժամանակների ու նախնի քաջերի մասին, այսինքն՝ հնագույն ժամանակի պատմությունը: Սրան համապատասխանում է Սեբեոսին կից Ա զլխի խոստաբանությանը հաջորդած շարադրանքը՝ խիստ աղճատված ու պակասավոր վիճակում, որը սույն հոդվածում այլևս քննության նյութ չի դառ-

¹⁷ Այստեղ պետք է հասկանալ մատյանի մի հատվածը, որը վերաբերում էր հայ ու պարթև առաջին զահակայններին, և ոչ ամբողջ մատյանը, որը սյան վրա արձանագրել անհնար էր:

¹⁸ Գ. Արզարյանը այս հատվածի թարգմանության մեջ երկու տեղ էականորեն շեղվել է բնագրից. որակելով որպես բնագրի վերձանման միջոց: Նախ, որ, ըստ նրա, Մարարան է գտել (=տեսել) սյան վրայի արձանագրությունը, Լեկոբոգ, որ «զոր իմ գտեալ ի Միջագետս ի նորին աշակերտացն» միտքը թարգմանել է «սա գտնելով Միջագետքում, նրա աշակերտների մոտ»: Առաջին շեղումը խիստ հակասում է բնագրին և հիմնավոր չէ: Ստացվում է, որ Մարարան է տեսել Մարաբայի մատյանից արված արձանագրությունը և նույն Մարաբան պատմելու է ըստ Մարաբայի (Գ. Արզարյան, նշվ. աշխ., էջ 33 և էջ 140—141, բնագրի վերականգնում՝ Ե): Զարմանալի է նաև երկրորդ շեղումը: Բնագրի գրված «զոր իմ գտեալ ի Միջագետս ի նորին աշակերտացն» հատվածը դարձել է՝ «մա գտնելով Միջագետքում, նրա աշակերտների մոտ»:

նախու ներկուրդ, դրանից հետո եղածները, որոնք վերաբերում էին հայոց և պարթևաց առաջին հինգ թագավորների ժամանակներին: Սրան համապատասխանում է Բ գլխի շարադրանքը՝ դարձյալ աղծատված ու պակասավոր, որի վրա է լինելու մեր ուշադրությունը: Ներուրդ, իր իսկ՝ հեղինակի ապրած ժամանակի աղետալի անցքերի նկարագրությունը: Այս մասը մեզ չի հասել: Ավելի ճիշտ, նախորդ երկուսի հետ չի հասել և անհավանական չէ, ինչպես ենթադրել են ուսումնասիրողներից շատերը, որ դա է Փավստոսի մեզ հասած «Հայոց պատմությունը»¹⁹:

Երկրորդ պարբերության մեջ հեղինակը նպատակ է ունեցել նշելու, թե որտեղից կամ ի՞նչ աղբյուրի հիման վրա է գրելու հինգ թագավորների մասին: Տեղեկանում ենք, որ պատմելու է ըստ Մարաբայի մատյանի, ավելի ճիշտ, ըստ այդ մատյանի մի հատվածի, որը դրոշմված է հղել Սանատրուկ թագավորի պալատի սյուներից մեկի վրա²⁰:

Երրորդ պարբերության մեջ բացատրվում է, թե ինչ հանգամանքների բերումով և ինչպես հայտնաբերվեց այդ արձանագրությունը: Իմանում ենք, որ պարսից թագավորը (առայժմ էական չէ, թե՛ որը) պահանջել է Սանատրուկ թագավորի ավերված պալատի սյուները, որոնք թաղված են եղել պալատական շինությունների փլուտակների տակ՝ Մծբին քաղաքում: Այս պատճառով բացել են ավերակները և հանդիպել են արձանագրությանը: Եվ քանի որ հեղինակը (Իհարկե, ոչ Մարաբան) ինչ-որ դիպվածով ներկա է եղել ու ծանոթացել է բովանդակությանը, որոշել է հինգ թագավորների մասին «գրուցակարգել» ըստ արձանագրության, որպես խիստ արժանահավատ վավերագրի:

Չորրորդ պարբերությունը արձանագրության վերնագիրն է՝ բառացի բերված հեղինակի կողմից: Պարզվում է, որ արձանագրությունը Տրդատ Քաջի հրամանով սյան վրա դրոշմել է Ագաթանգեղոս գրիչը՝ «գտնելով արքունի դիվանից, այսինքն՝ դիվանում եղած մատյանից, որը խոստաբանության նախորդ նշումի համաձայն անկասկածելիորեն Մարաբայի մատյանն է: Այստեղ ուշագրավ է նաև, որ, ըստ վերնագրի, խոսվելու է միայն հայոց առաջին թագավորների մասին՝ չկա «պարթևաց» բառը, ու կարող է թվալ, թե վերնագիրը հակասում է երրորդ պարբերության «հայոց և պարթևաց հինգ թագավորներ» արտահայտությանը:

Ասում ենք կարող է թվալ, որովհետև նման հակասություն չկա: Արձանագրողը նպատակ է ունեցել դրոշմել հայոց առաջին թագավորների պատմությունը, որի համաձայն վերնագրել է արձանագրությունը: Սակայն Մարաբայի տվյալներով, որի հիման վրա գրվում էր արձանագրությունը, հայոց

19 Նկատի ունենալով հոգվածի հնարավորությունը և այն, որ քննվող չարքի համար այնքան էլ կարևոր չէ, այս խնդրին այժմ չենք անգրադառնալու:

20 Ասվածից չայտք է հետևեցնել, թե ես ծանոթ չի եղել Մարաբայի մատյանի ամբողջ բովանդակությանը (փաստեր կան, որ այդպես լինել չէր կարող), այլ՝ հատուկ նշել է արձանագրությունը՝ հինգ թագավորների մասին իր պատճառ առավել արժանահավատ դարձնելու համար:

21 Անհավանական չէ, ինչպես կարծել են, որ սա Հայոց դարձի պատմության հեղինակ Ագաթանգեղոսն է՝ «...աչոյ Բաբուրայից Տրդատայ», ինչպես բնորոշել է նրան Մ. Խորենացին (Թ, գլ. 4է) և քանիցս հիշել իր Պատմության մեջ (սՄ ո վ ս ի ս ի և ո թ ե ն ա ց ո ռ Պատմություն Հայոց», Տփղիս, 1913, Բ, գլ. 27, ՀԹ, 2, 24, 2է):

առաջին թաղավորները, ինչպես կտեսնենք, անխղճորեն կապված են պարթև առաջին զահակալների հետ։ Ուստի, արձանագրողը անկախ վերնագրից, չէր կարող չխոսել նույն պարթև առաջին զահակալների մասին և խոսել է, ինչպես նախորդ պարբերության մեջ նշել է հեղինակը։ Սի խոսքով, արձանագրության վերնագիրը հիմնական նպատակն է ուղենշում՝ շփոթելով հարակիցը։

Այսպիսով, խոստաբանության ամեն մի հաջորդ պարբերություն իմաստային սերտ կապի մեջ է նախորդի հետ, լրացնում, բացահայտում է նախորդի միտքը, որով և անկասկածելի է դառնում հեղինակի խոսքը հայոց և պարթևաց հինգ թաղավորների մասին։

Այսուհանդերձ, Անանուն Ա-ի շարադրանքում (նկատի ունենք միայն Բ գլուխը) հայոց և պարթևաց այդ հինգ թաղավորները չեն երևում և թվում է այդպիսիք չկան։ Ի դեպ, Իթև նկատի ենք ունենում ամբողջ Բ գլուխը՝ ներառյալ արբալացանկերը, շատ են, իսկ առանց արբալացանկերի՝ բիշ են։

Պարզվում է, որ այս բանը հետևանք է Բ գլխի առանձին հատվածների կորստի, որը մինչև այսօր չի նկատվել և հնարավոր է մասնակիորեն վերականգնել նույն՝ մարաբասյան մատյանը օգտագործած Մ. Խորենացու համապատասխան տեղեկությունների միջոցով։

Մ. Խորենացու մոտ, ըստ Մար Աբասի, պարթև առաջին զահակալներն են Արշակ Քաջ, Արտաշես, ապա՝ Արշակ Մեծ, իսկ հայոցը՝ Վաղարշակ, որին Արշակ Մեծը թաղավոր կարգեց Հայաստանում ու դարձրեց հայ Արշակունիների հարստության հիմնադիրը, ապա՝ Արշակ Առաջինը։

Դրանց մասին Մ. Խորենացին պատմում է Ա գրքի Ը (8-րդ) և Բ գրքի Ա—Թ (1—9-րդ) գլուխներում։ Ուշադրավ է հատկապես Բ գրքի Թ գլխի ավարտը. «Աստուծո՛ւ սպառի՛ն բան՛ Ժերունույն Մար Աբաս Կատինայ», այսինքն՝ հայ Արշակունիների յազավորության երկրորդ գահակալ Արշակ Առաջինի գործերի նկարագրությամբ ավարտվել են Մար Աբասի տեղեկությունները։

Այս ամենից հետևում է, որ Անանուն Ա-ի մոտ էլ հիշյալ հինգ թաղավորներն էին լինելու, որ նրա խոսքը, իրոք, ոչ թե ճիշտ, այլ ճիշտ թաղավորների մասին էր լինելու։

Ինչո՞ւ կամ ի՞նչ հիման վրա Մ. Խորենացու տեղեկությունները պետք է տեսնել Անանունի մոտ։

1. Ինչպես Անանուն Ա-ն, այնպես էլ Մ. Խորենացին, իրենց հաղորդումների համաձայն, հայ ու պարթև առաջին Արշակունիների մասին տեղեկությունները քաղել են միևնույն՝ մարաբասյան մատյանից։

2. Անանուն Ա-ի և Մ. Խորենացու մարաբասյան այդ տեղեկությունները, ինչպես և սպասելի էր, բոլոր հիմնական հարցերում նույնանում են կամ լրացնում միմյանց²² և դրանով հաստատում նրանց հաղորդումների իսկությունը։

²² Այս և հետագա բնագծումները մերն են—Լ. Շ.։

²³ Անանուն Ա-ի և Մ. Խորենացու միջև նկատվում է բնականորեն մեկ հակասություն՝ Թաղարատունիների ծագման ստիժով, որը քննվող հարցի համար էական նշանակություն չունի։ Կան նաև մեկ-երկու արտաբնական թվացող անհամաձայնություններ, որոնք բացատրվել են մեր կողմից («Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1966, № 1, էջ 171, 2002 ԳԱ «Լրարեր», 1976, հ. 9, էջ 95—106)։

3. Համեմատելի այդ հատվածներում ինչպես Մ. Խորենացին, այնպես էլ Անանուն Ա.-ն պատմում են հայ ու պարթև առաջին Արշակունիների մասին: Ինչպես տեսանք, Մ. Խորենացու մոտ որանք հինգն են, Անանուն Ա.-ի մոտ չեն երևում, շնայած խոստաբանության մեջ ելած նրա ցուցումներին:

Ահա այս փաստերի թելադրանքով, երբ համեմատում ենք Անանուն Ա.-ի մեղ հասած շարադրանքը (Սերնոս, գլ. Բ) Մ. Խորենացու համապատասխան տվյալների հետ (գիրք Ա, գլ. Ը, գիրք Բ, գլ. Ա—Բ), Անանուն Ա.-ի մոտ նկատվում են պակասավոր տեղեր, կորած հատվածներ, որոնք պետք է լրացվեն: Ի դեպ, պակասավոր այդ տեղերը երևում են իր իսկ՝ Անանուն Ա.-ի մեղ հասած շարադրանքից, անգամ առանց Մ. Խորենացու, սակայն մոտավոր վերականգնումը հնարավոր է միայն Մ. Խորենացու միջոցով:

Այժմ նշենք այդ պակասավոր տեղերը և փորձենք համոզվել մեր ասածներում:

Այսպես՝ Բ գլխի հենց սկզբում Անանուն Ա.-ն հայտնում է, որ Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից 61 տարի հետո և սելևկյան երրորդ գահակալ Անտիոքոս Թեոսի թագավորության 11-րդ տարում (այսինքն, ինչպես ցույց ենք տվել²⁴ նաև ըստ Անանուն Ա.-ի՝ մ. թ. ա. 262 թ.) պարթևները անկախացան Սելևկյաններից և թագավորաց Արշակը, որին, ի տարբերություն Մ. Խորենացու «Քաջ» հորջորջման, նա «Մեծ» է անվանում: Այնուհետև պատմում է այս Արշակի նվաճումների, հատկապես Բաբելոնի գրավման մասին և ավելացնում. «Թագաւորէ Արշակ ի Բաբելոն ամս բսւլումս»:

Այս հաղորդումից անմիջապես հետո՝ հաջորդ պարբերությամբ ասվում է. «Եւ եղև յամին հարիւր և տասներորդի շորրորդի (հասկանալ «...հարիւր և տասներորդի ութերորդի»²⁵—Լ. Շ.) Արշակայ արքայի Պարթևաց, ի շորրորդում ամի թագաւորութեան Դեմետրեայ ի վերայ Ասիաստանի և Ասորոց, մինչ Արշակ արքայ գնաց յարևելս՝ զաւրաժողով լիալ և Դեմետրիոս չոգաւ կալաւ զԲաբելոն»:

Հետագա շարադրանքում խոսվում է այս Դեմետրիոսի գերության, ապա Ասորիքի վրա նրա եղբոր՝ Անտիոքոս Սիդեացու տասնամյա թագավորության և Արշակի թագավորության 128-րդ տարում նրա պատերազմի ու սպանության մասին: Ի դեպ, նշված է նաև Արշակի թագավորության 129-րդ տարին, որպես հայ Արշակունիների թագավորության հիմնադրման տարեթիվ:

Մի խոսքով, Բ գլխի մեղ հասած շարադրանքից այնպես է երևում, որ այս երկարատև ժամանակաշրջանում՝ 128 կամ 129 տարի, Պարթևներն ընդամենը մեկ գահակալ են ունեցել, տվյալ ղեկավար Արշակ Ա.-ը՝ Մեծ կամ Քաջ կոչվածը, որը պայքարել է թե՛ Սելևկյան երրորդ գահակալ Անտիոքոս Թեոսի դեմ՝ սկսած սրա թագավորության 11-րդ տարվանից, թե՛ 13-րդ գահակալ Անտիոքոս Սիդեացու դեմ՝ ընդհուպ մինչև վերջինիս սպանությունը: Ըստ պատմագիտության, այս ղեկավարի միջև ընկած է 123 տարի (252—129):

²⁴ Լ. Շ ա ի ի ն յ ա ն, Պարսից Արշակունի հարստության հիմնադրման տարեթիվն ըստ Մ. Խորենացու (ՊՔԶ, 1966, № 1, էջ 170—171), ն ու յ ն ի, Մովսես Խորենացու ժամանակագրության մի քանի հարցերի մասին (նույն տեղում, 1971, № 1, էջ 131—138):

²⁵ Լ է ո ն Շ ա ի ի ն յ ա ն, Հայ Արշակունիների թագավորության հիմնադիրը ըստ Անանունի և Մովսես Խորենացու (ՀՍՍՀ ԳԱ տեղագրություն, 1976, № 6, էջ 99—101):

Ըստ Անանուն Ա-ի, ինչպես տեսնում ենք, 129 տարի է, այսպես է նաև Մ. Խորենացու մոտ²⁶։

Ավելորդ է ասել, որ ժամանակագրորեն այս բանը խիստ անհավանական է, իսկ պատմականորեն՝ սխալ, որովհետև հայ և օտար աղբյուրների վկայություններով (Հուստինոս, Եվսեբիոս Կեսարացի, Մովսես Խորենացի, Ասողիկ) Գեմետրիոսի և Անտիոքոս Սիդեացու դեմ պատերազմողը պարթև առաջին զահակալը չի եղել։

Այդպես է, սակայն, ըստ մեզ հասած շարադրանքի։ Ուշադիր քննությունից երևում է, որ բնագրի խաթարման հետևանքով տարբեր ժամանակներում իշխած պարթև երկու Արշակների գործեր իրար են խառնվել և վերագրվել միայն թագավորության հիմնադիր Արշակ Ա-ին, ժամանակագրական այս անհավանականությունը կվերանա, եթե մեզ հասած շարադրանքում՝ «Թագաւորէ Արշակ ի Բաբելոն ամս բազումս» հաղորդումից անմիջապես հետո ըստ Մ. Խորենացու ավելացնենք՝ «Յետ նորա Արտաշէս ուրդի նորա։ Չսս պսւ-ւազատէ նորին ուրդի Արշակ, որ կոչեցաւ Մեծ»²⁷ կամ շարադրանքի մեկ այլ տարբերակ։ Հնարավոր է նաև, որ Անանուն Ա-ի մոտ եղել են այլ մանրամասներ, հատկապես Արշակ Բ-ի թագավորության սկզբներին վերաբերող՝ մինչև Գեմետրիոսի դեմ պատերազմելը, սակայն սույն պահին չա չէ կարևորը։ Կարևորն այն է, որ վերականգնելով ենթադրյալ այդ կորուստը, Անանուն Ա-ի մոտ ևս հայտնի են դառնում պարթևական առաջին 3 զահակները՝ Արշակ Ա (Քաջ կամ Մեծ կոչված), Արտաշէս, Արշակ Բ (Մեծ կոչված), ինչպես Մ. Խորենացու մոտ է, ինչպես, փաստորեն, եղել է մարաբասյան մատյանում։

Այժմ երկրորդ, և ամենակարևորի մասին։

Նկարագրելով Սելևկյան զահակալ Անտիոքոս Սիդեացու պատերազմն ու սպանությունը Արշակի թագավորության 128-րդ տարում՝ «Յամի հաբիւերուրդի քսաներորդի ութերորդի թագաւորութեան իւրոյ»²⁸, հաջորդ շարադրանքում Անանուն Ա-ն գրում է. «Յայնմ ժամանակի թագաւորեցոյց Արշակ զորդի իւր զԱրշակ Փոբ կոչեցեալ ի վերայ աշխարհիս Հաչոց ի Մծբին քաղաքի։ Եւ զատուցանէ նմա սահմանս զԱրուստան առ երկրան Տաճկաց և առ երկրան Ասորոց, և Կապուտկեայ առ Կիլիկիայ, մինչև ցեղր ծովուն մեծի արևմտից. և ցիսիսոյ կողմանէ ի լեւոն մեծ Կովկաս, որ ձգի ընդ կողմանս արևելից և անցանէ առ սահմանան առ ամուր աշխարհան Մարաց, և հասանէ ի լեւոն Ղարասպ, և անցանէ առ Նոր Շիրակ երկրան։ Եւ յուղարկէ զնա Մրծանայ (նաև՝ Մծբնայ—Ս. Շ.) ընդ յարևմուտս զաւրու մեծաւ եթանասուն հազարաց սպառազինաց, և մեծամեծ իշխանաւք նախարարաց հազարաց բիրաւորաց, որում ոչ որ կարէր զդեմ ունել պատերազմաւ։ Սմա ընդ առաջ ելանէ Բագարատն Փառազեան յորդուցն Արամենակայ նախարար մեծ հանդերձ զաւրու։ Դատուցանէ նմա պատարագ ոսկի և արծաթ, և զարդարէ զնա ի սնդր և ի վակաս. պսակէ զնա ի թագ հայրենի. և նստուցանէ զնա ի վերայ ոսկիապատ

²⁶ Հ. Փ. Եաճեյան, Որն է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը («Բանբեր Մատենադարանի», 1967, № 8)։

²⁷ Մ. Խորենացի, Բ, դ, Բ։

²⁸ Ինչպես այս, այնպես էլ Անանունի նախորդ ու հաջորդ ժամանակագրական ցուցումներում նկատի է առնված ոչ թե տվյալ զահակալի, այլ պարթև Արշակունիների թագավորության ամբողջ տևողությունը՝ հիմնադրման օրվանից մինչև այդ պահը (Հեն Եաճեյան, Նշվ. աշխ., էջ 101)։

ականակու զահոյիցն. և տայ նմա զդուստր խոր ի կնութեան:

Ձսա արար Արշակ արքայ տապալտ Հայաստան հրկրին, որ էր իշխան և հրամանատար, ամենայն թագաւորութեանն հրամանաց զլուխ, և հայր արքայի և եղբայր, որում հոտ իշխանութիւն տէրութեանն այնորիկ: Նա կոտորեաց զհսկայսն, որ զարաժողով հղեն ի վերայ նորա ի Միջագետս Ասորոց:

Սւ այս են իշխանք Պարթևաց, որք թագաւորեցինն զկնի Արշակայ չար իրեանց ի Բաշլ Շահաստան յերկիրն Քուշանաց: Որդիք չորք ասեն լեալ Արշակայ արքայի Պարթևաց. զառաջինն ասեն թագաւորեցոյց Թեոփաղոսոց աշխարհին. զերկրորդն ի վերայ Կիլիկեցոց. զերրորդն ի վերայ Պարթևաց. զչորրորդն ի Հայաստան աշխարհին:

Այնուհետև բերված են պարթև ու հայ Արշակունիների արքայացանկերը, պարթևներին՝ մինչև նրանց վախճանը, իսկ հայ Արշակունիներին՝ ներառյալ Պապ թագավոր, որով և ավարտվում է Բ զլուխը:

Նախքան վկայակոչված հատվածի բնութմը նկատենք, որ սա Բ զլխի (և ոչ միայն Բ զլխի) այն միակ տեղն է, ուր խոսվում է հայ Արշակունիների մասին: Իսկ ի՞նչ նկատի չունենանք հայ Արշակունիների արքայացանկը. խոսվում է միայն առաջին հայ Արշակունու մասին: Այլ կերպ ասած, այն միակ տեղն է, որն ինչ-որ չափով համապատասխանում է ազաթանգեղյան արձանագրության վերնագրի պահանջին: Սակայն ի՞նչ չափով է համապատասխանում, ի՞նչ վիճակով է այն հասել մեզ, և ի՞նչ կապ ունեն հայ ու պարթև Արշակունիների արքայացանկերը Բ զլխի հետ:

Վկայակոչված հատվածում առաջին հայացքից որևէ խաթարում չի նկատվում և թվում է ոչինչ չի պակասում: Սակայն այդպես թվում է, երբ տվյալ հատվածը դիտում ենք մեկուսի, դուրս չենք գալիս նրա շրջանակներից և անտեսում ենք թե՛ Անանուն Ա-ի, և թե՛ Մ. Խորենացու արդեն մեզ ծանոթ տեղեկությունները:

Ինչպես տեսանք, խոստարանության երրորդ պարբերության մեջ Անանուն Ա-ն խոստացել է «զբուցակարվել», այսինքն՝ պատմել հայոց և պարթևաց հինգ թագավորների մասին՝ «...զամս և զաւուրս հինգ թագաւորացն Հայոց և Պարթևաց...», որը թղթմեալ ի վերայ վիմի...», այսինքն՝ Մծբինում հայտնաբերված արձանագրության մեջ: Բ զլխի շարադրանքում այդ խոստումը, իրոք, մասնակիորեն կատարված է: Առաջին հատվածում՝ մինչև Անտիոքոս Սիդեացու սպանությունը, նույնն է թե՛ մինչև Հայաստանում առաջին Արշակունու թագադրումը. բավականաչափ հանգամանորեն խոսվում է պարթև առաջին զահակալների (նկատի ունենալ նաև վերը նշված կորուստը) և նրանց զործնրի մասին, անգամ ավելի հանգամանորեն, քան Մ. Խորենացու մոտ է, իսկ հաջորդ հատվածում, ուր խոսվում է հայ Արշակունիների մասին և սպասվում է ավելի շատ տեղեկություններ, խիստ ազբաւորիկ տվյալներ ենք գտնում: Հիշված է ընդամենը մեկ զահակալ՝ Արշակ Փոքր կոչվածը, և սրա հետ առնչվող երեք տեղեկություն՝ յոթնասուն հազարանոց զորքով Արևմուտք գնալը, Բագարատ նախարարի կողմից մեծարվելն ու նրան մեծարելը, Ասորոց Միջագետքում ինչ-որ հսկաների կոտորելը: Ի դեպ, անգամ անորոշ է, թե վերջին դեպքը ո՞ւմ է վերաբերում՝ Արշակ Փոքրի՞ն, թե՛ Բագարատին: Այսպիսով հայոց մասում շարադրանքը խիստ թերի է թվում: Այսուհանդերձ, միայն երրորդ պարբերության միջոցով դեռևս դժվար է պնդել:

որ Բ գլխի այդ հատվածը թերի է հասել: Նախ այն պատճառով, որ շարադրանքում առաջին հայացքից խաթարում չի նկատվում և, բացի այդ, հնարավոր է մտածել, որ արձանագրության մեջ եղել է այն, ինչ ավանդել է Անանուն Ա-ն: Մի խոսքով ավելին չպահանջել Անանուն Ա-ից:

Ահա այստեղ է, որ նորից հանդես է գալիս Անանուն Ա-ն և հայտնում, որ ավելին է եղել արձանագրության մեջ. հետևաբար, ավելին էր լինելու նաև շարադրանքում: Այս բանի ապացույցն է սղաթանգեղյան արձանագրության վերնագիրը. «Ես Ազաթանգեղոս գրիչ գրեցի ի վերայ արձանիս այսորիկ իմով ձեռամբս զամս առաջին քաղաւորացն Հայոց...»: Կարևոր է նաև վերնագրին անմիջապես հաջորդող ցուցումը՝ «Այս փոխ և սպա յիրում տեղւոյն տեսցես զպատենեն»:

Ինչպես տեսնում ենք, միևնույն արձանագրության հիման վրա Անանուն Ա-ն մեկ խոստանում է «զրուցակարգել, զամս և զաւուրս հինգ քաղաւորացն Հաւոց և Պարբեաց», մեկ էլ հայտնում է, որ կրեթի արձանագրության պատճենը, որում գրված է «զամս առաջին թագաւորացն Հայոց»: Այս հաղորդումները, ինչպես նշել ենք, ոչ միայն իրար չեն հակասում, այլ համատեղ բացահայտում են արձանագրության հիմնական բովանդակությունը: Այն, որ արձանագրությունը վերաբերել է ոչ թե պարթևներին, այլ հայոց առաջին թագավորներին (դրա ապացույցն է վերնագիրը), որ, հետևաբար, պարթևները հիշվել են որպես հարակից անհրաժեշտություն: Ուրեմն, թե՛ արձանագրության մեջ, և թե՛ Անանուն Ա-ի շարադրանքում, որը փաստորեն արձանագրության պատճենն էր, հայոց թագավորների մասին ավելին էր խոսվելու, քան՝ պարթևների: Եվ քանի որ ներկա վիճակով Բ գլխի շարադրանքը դրա հակառակն է, համոզված կարելի է ասել, որ հայոց մասը, այսինքն քննվող հատվածը խաթարված է և պակասավոր: Այս հաստատող փաստ է նաև վերնագրի «քաղաւորացն» բառը: Դրանով ակնհայտ է դառնում, որ և՛ արձանագրության մեջ, և՛ Անանուն Ա-ի բերված պատճենում խոսվել է հայոց առաջին քաղաւորների և ոչ թե առաջին քաղաւորի մասին, տվյալ դեպքում Արշակ Փոքրի, ինչպես սովոր է մեզ հասած բնագրում: Այստեղ, թերևս, կարծիք չի, որ «առաջին քաղաւորացն Հայոց» արտահայտության մեջ նկատի է առնված Բ գլխի վերջում ամփոփված հայ Արշակունիների արքայացանկը կամ դրա մի մասը՝ «...մինչև «Քաջն խոսրով» կամ «առ առաւելն մինչև Մեծ Տրդատէս», ինչպես ժամանակին ենթադրել է Ստ. Մալխասյանցը²⁹: Այդպես գուցե հնարավոր լիներ մտածել, եթե չլինեին խոստարանության հետևյալ տվյալները: Նախ նշենք, որ հայ Արշակունիների այդ արքայացանկը ոչ թե պատմություն է, այլ սովորական մի ցուցակ, թագավորների սոսկ թվարկում իրենց զահատարիներով, ինչպես առհասարակ ամեն մի արքայացանկ, իսկ Անանուն Ա-ն հակառակ դրա մերթ հայտնում ու խոստանում է պատմել հայոց և պարթևաց թագավորների մասին, մերթ՝ գրել հայոց թագավորների պատմությունը: Օրինակ՝ «զրուցակարգել ...զամս և զաւուրս հինգ քաղաւորացն Հայոց և Պարբեաց», կամ՝ «...գրեցի զամս առաջին քաղաւորացն Հայոց» արտահայտությունները, որոնք այստեղ ամենևին էլ քվարկել իմաստը չունեն: Բացի այդ, երևակայելն իսկ անհնար է, որ սե-

²⁹ Ս Լ Բ Կ Ե Ս, էջ 169—170, ծան. 16:

րունդներին ավանդվող մի ամբողջ արձանագրություն սոսկ արքայացանկ է եղել: Այդ դեպքում՝ ում էր պետք կամ ի՞նչ նպատակ կունենար այն, եթե չէր խոսվելու նրանց մասին: Սակայն չծավալվենք, Փաստերը ցույց են տալիս, որ, իրոք, նշվել ու խոսվել է, անգամ՝ ավելին, քան պետք էր արձանագրության համար: Իբրև ապացույց նկատի ունենք Բ գլխի թեկուղ մեղ հասած շարագրանքը մինչև արքայացանկեր, որը և համարվելու է արձանագրության ոչ ամբողջական, խաթարված պատճենը: Վերջապես, այս հարցում ևս չպետք է անտեսել Մ. Խորենացուն: Վերևում տեսանք, որ, ըստ նրա, մարաբասյան մատյանը, որից ընդօրինակվել է արձանագրությունը, ավարտվել է հայ Արշակունիների երկրորդ գահակալ Արշակ Առաջինի գործերի նկարագրությամբ: Ուրեմն, ոչ արձանագրողը և ոչ էլ արձանագրության պատճենն ընդօրինակող Անանուն Ա-ն ավելին դրել չէին կարող:

Ասվածներից հետևում է, որ ազաթանգեղյան արձանագրությունը, նույնն է թե դրա պատճենը ներկայացնող Բ գլուխը, չեն ընդգրկել հայ Արշակունիների ամբողջ արքայացանկը, ինչպես նաև պարթևներին, չնայած արքայացանկերը կաղմելիս օգտագործվել են նաև Բ գլխի որոշ տվյալներ, որոնք ևս մեղ հասած շարագրանքում բացակայում են: Նկատի ունենք պարթևների արքայացանկի առաջին միտքը՝ «Եւ լինին ամենայն ամբ Արշակայ կենաց իւրոց ԺԼ (130) ամ, և թագաւորեաց ամս յիսուն և վեց», ինչպես նաև հայ Արշակունիների արքայացանկի, այսպես ասած, նախաբանը. «Եւ այս են թագաւորք Արշակունիք, որք թագաւորեցին Հայաստան երկրի զկնի Արշակայ Մեծի... մինչև ապա Արշակ՝ ամս ԺԳ»:

Արքայացանկերում թվարկված մյուս բոլոր գահակալները, այն է՝ պարթևները Արշակ Մեծից հետո, իսկ հայ Արշակունիները՝ Վաղարշակի հաջորդ Արշակից հետո, մարաբասյան մատյանի բովանդակության համաձայն, չէին կարող հիշվել ազաթանգեղյան արձանագրության մեջ, հետևաբար և՛ Բ գլխի նախնական շարագրանքում³⁰, Ուրեմն, առանազգուրյան վերնագրում նշված՝ «...գրեցի ...զամս առաջին քաղաւորացն Հայոց» միտքը սրանց չի վերաբերում:

Այժմ ուշադրություն դարձնենք հայ Արշակունիների արքայացանկի վերջը նշված նախաբանին, որը քննվող հատվածի խաթարումը հաստատող փաստերից է: Այնտեղ գրված է. «Եւ այս են թագաւորք Արշակունիք, որք թագաւորեցին Հայաստան երկրի զկնի Արշակայ Մեծի»:

Արդ՝ թագաւորէ Արշակն Փոքր կոչեցեալ՝ յամի հաբիւեւորդի Ըսան և ինկեւորդի թագաւորութեանն Արշակայ հաւր իւրոյ ի վերայ Հայաստան երկրի ի Մրծուին (նաև՝ Մծբին—Լ. Շ.) քաղաքի, եպարք իւրով Վաղարշակաւ. գորքաւորեցոյց Հայաստան աշխարհիս ամս ԽԲ³¹, Ապա Արշակ՝ ամս ԺԳ»:

Ինչպես տեսնում ենք, էական տարբերություններ կան մի կողմից Բ գլխի քննվող հատվածի, իսկ մյուս կողմից հայոց արքայացանկի այս նախաբանի

30 Վերը ասվածից հետևում է, որ արքայացանկերը հետո են կցվել Բ գլխի շարագրանքին: Իրանը կաղմել է կամ Անանուն Ա-ն՝ օգտագործելով Բ գլխի և դրան հաջորդած ինչ-որ գլուխների տվյալներ, որոնք մեծ մասամբ մեզ չեն հասել, կամ էլ մեկ ուրիշը՝ հենվելով Անանուն Ա-ի միևնույն տվյալների վրա: Մի խոսքով, ուղղակի, թե անուղղակի, արքայացանկերի հեղինակը Անանուն Ա-ն է:

31 Սա գրչական սխալ է, պետք է լինի՝ ամս ԻԲ (22), ինչպես Մ. Խորենացու մոտ է (գիրք Բ, գլ. Ը):

միջև: Դրանք են. 1) Քննվող հատվածում հայ Արշակունիների թագավորության հիմնադիրը Արշակ Մեծի որդի Արշակ Փոքրն է, այստեղ՝ իբրև դահակից, հանդես է գալիս նաև նրա եղբայր Վաղարշակը («Արդ՝ քաղաուրէ Արշակն Փոքր կոչեցեալ ...ի վերայ Հայաստան երկրի ...եղբարք իւրով Վաղարշակաւ...»): 2) Քննվող հատվածում ոչ մի խոսք չկա Վաղարշակի, ինչպես նաև սրա հաջորդ Արշակի մասին, այստեղ գոնև հիշված են նրանց անունները՝ իրենց գահատարիներով, և որ կարևորն է, այստեղ վերջին հաշվով Վաղարշակն է համարված հայ Արշակունիների հիմնադիրը («...զոր (Վաղարշակին—Լ. Շ.) քաղաուրեցոյց (Արշակ Փոքրը.—Լ. Շ.) Հայաստան աշխարհիս»):

Այս տարբերություններով հանդերձ բավարար հիմքեր կան մտածելու, որ արքայացանկի նախաբանը սերտ աղերս ունի քննվող հատվածի հետ, որը նկատելի են նախորդ բոլոր հետազոտողները: Մեր կարծիքով, ճիշտ կլինի ասել, համառոտագրումն է փնջվող հատվածի:

Այդ աղերսի արտահայտությունը կամ, այսպես ասած, կրողը Արշակ Փոքր կոչվածն է. որին ուրիշ ոչ մեկը չի հիշատակել, բացի Անանուն Ա-ից: Ուստի և նշված տարբերությունները պետք է բացատրել ոչ թե մեկ ուրիշ հեղինակի աղդեցությամբ (օրինակ՝ Մ. Խորենացու, ինչպես կարծել են, որի անհավանականությունը ցույց ենք տվել մեկ ուրիշ առիթով³²), այլ քննվող հատվածի կրած կորուստներով. հանգամանք, որը քանիցս հաստատվեց խոստաբանության տվյալներով: Այլ կերպ ասած, տարբերությունները պետք է դիտել որպես կորած տեղեկությունների համառոտագրված արտահայտություններ և դրանց համաձայն նաև Մ. Խորենացու օգնությամբ վերականգնել կորած մասերը:

Ահա այս մոտեցմամբ, որը թելադրվում է ազաթանդեղյան արձանագրության վերնագրի պահանջներով, արքայացանկի նախաբանով և Մ. Խորենացու համապատասխան տեղեկություններով, Անանուն Ա-ի քննվող հատվածում կամ Բ ղլխի հայոց մասում նկատվում է երկու հատվածի կորուստ: Իրանցից մեկը ենթադրվում է քննվող հատվածի առաջին և երկրորդ պարբերությունների միջև: Առաջին պարբերությունը, ինչպես տեսնում ենք, ավարտվում է Արշակ Փոքրին հատկացված հայոց թագավորության սահմանների նշումով, որից անմիջապես հետո նոր պարբերությամբ լինելու էր հետևյալ ենթադրյալ հատվածը. «Եւ Արշակն Փոքր կոչեցեալ յամին հարիւրերորդի քսաներորդի իններորդի թագաւորութեանն Արշակայ հաւր իւրոյ գահակից առնէ զեղբայր իւր զՎաղարշակ ի վերայ աշխարհիս Հայոց ի Մծբին քաղաքի: Զետ այսու, երբ մեռանի հայր նորա Արշակ Մեծ՝ կեցեալ ամս ՃԼ (գուցե՝ ՃԽ)³³, թագաւորեալ ամս ՄԶ (գուցե՝ ՄԳ), զնա թողու թագավորութիւնն այնո-

32 Հեն Եահիայան, Նշվ. աշխ., էջ 96—103:

33 ենթադրելի է, որ այս տեղեկությունը ևս վերաբերվել է ոչ թե Արշակ Մեծի կյանքին, այլ Արշակունիների թագավորության տեղեկությանը՝ նրանց հիմնադրումից մինչև Արշակ Մեծի մահը, որը 140 տարի է (262—122 թթ. մ. թ. ա.)՝ ըստ Մ. Խորենացու, Ասողիկի և Սեբեոսի Պատմությանը կից Գ ղլխի հեղինակի («Բանբիւ Մատենադարանի», 1967, № 8, էջ 36, աղյուսակ Ա, ՊԲՀ, 1966, № 1, էջ 155—172, 1971, № 1, էջ 131—149): Ահա, այս պատճառով ՃԼ տարվա փոխարեն ենթադրում ենք՝ ՃԽ տարի: Ի դեպ, կարևոր է նաև, որ առանձին ձեռագրերում ՃԼ ամբ վերաբերում է ոչ թե Արշակի կյանքին, այլ՝ թագավորությանը, որով առավել դյուրին է ենթադրել Արշակունիների թագավորության տեղեկությունը:

րիկ՝ զոր և կալեալ ամս Իւ»։ Այլ կերպ ասած՝ այդ կորած հատվածը հիմնականում ունենալու է այնպիսի բովանդակություն, ինչպիսին կա հայոց արքայացանկի նախաբանում կամ էլ՝ նույն բովանդակությամբ մեկ այլ շարադրանք էր լինելու։

Ենթադրյալ այս պարբերության հավելումը (անույնանուն նշված տեղում) օրինական է երևում ոչ միայն այն պատճառով, որ չի խաթարում Անանուն Ա-ի մնացած շարադրանքը³⁴, որ հայոց արքայացանկի նախաբանի տվյալները դադարում են արտառոց լինելուց՝ ունենալով, այսպես ասած, իրենց նախադիրը կամ էլ՝ մասամբ բավարարում են ազաթանգեղյան վերնագրի պահանջները, այլև այն պատճառով, որ դրանով վերանում է Անանուն Ա-ի այդ հատվածի և Մ. Խորենացու համապատասխան տեղեկությունների հակասությունը։

Բանն այն է, որ Մ. Խորենացու մոտ Բաղարատ նախարարը Վաղարշակին է ընծաներ մատուցել, սիրով ու կամովին հպատակություն հայտնել, մեծարել նրան ու մեծարվել նրանից (գիրք Ե, գլ. Գ—Ի), իսկ Անանունի տվյալ հատվածի համաձայն այդ ամենը և էլ ավելին Արշակ Փոքրի հետ է պատահել։

Այժմ արդեն, երբ նկատի ենք առնում նաև ենթադրյալ հավելումը, Անանուն Ա-ի մոտ ևս ի հայտ են գալիս Վաղարշակ—Բագարատ փոխհարաբերություններ՝ Արշակ Փոքր—Բաղարատ հարաբերությունների փոխարեն։

Այսուհանդերձ, տվյալ պարբերության հավելումով, ինչպես տեսնում ենք, դեռևս հնարավոր չէ սպառիչ պատասխան տալ ազաթանգեղյան արձանագրության վերնագրի պահանջին։ Հնարավոր չէ, քանի որ չկան հայոց առաջին գահակալները (Արշակ Փոքր, թե՛ Վաղարշակ, էական չէ, դեռևս մեկն է) և կարևորը՝ դեռ չկա դրանց ժամանակի պատմության շարադրանքը։ Դժվար թե հայոց առաջին գահակալի միակ հիշարժան գործը Բագարատի հետ ունեցած փոխհարաբերությունը լիներ և միայն այդ հիման վրա հեղինակը բարձրագույն, այն էլ քարի վրա հայտարարեր, թե՛ «գրեցի զամս առաջինն քազաուրացն Հայոց»։ Մի խոսքով, բուն գաղտնիքը դեռ չի բացված։

Ահա այս պահանջով և Մ. Խորենացու օգնությամբ փորձենք բացահայտել գաղտնիքը՝ գտնել Անանուն Ա-ի քննվող հատվածի մյուս կորուստը։

Ուղեցույց ունենալով Մ. Խորենացու համապատասխան տեղեկությունները, կարելի է ենթադրել, որ այդ կորուստը բավականաչափ ծավալուն է եղել (փաստորեն դա է եղել ազաթանգեղյան արձանագրության հիմնական բովանդակությունը) և հաջորդել է քննվող հատվածի երրորդ պարբերության շարադրանքին, այսինքն՝ այն մտքին, երբ խոսվում է Ասորոց Միջագետքում ինչ-որ հսկաների կոտորելու մասին։ Կորած այդ հատվածում ամենայն հավանականությամբ հիշատակվել են Վաղարշակի նշանավոր գործերը։ Այն է՝ Մորփյուլիկոսի դեմ պատերազմին ու նրան Նաղթելը, կուսակալությունների հաստատումն ու հայոց թագավորության սահմանների ապահովումը, այսպես

34 Այս հավելումով քննվող հատվածում կատարվելու է միայն մեկ ճշգրտում՝ երրորդ պարբերության մեջ Արշակյւ կարգալ Վաղարշակ, հետևյալ պատճառով. գրիչը, որի ձեռքին արդեն Անանուն Ա-ի պակասավոր քննգիրն էր, ծանոթ էր միայն Արշակ Փոքրին։ Այստեղ, հանդիպելով Վաղարշակ անվանը, դարձրել է Արշակ՝ համաձայնեցնելով նախորդ շարադրանքին։ Ժիշտ այնպես, ինչպես այժմ Արշակը դարձնում ենք Վաղարշակ։

տական կարգ ու կանոնի, արքունի դործակալությունների, նախարարական տոհմերի հիմնադրումը և այլն: Մի խոսքով՝ այն ամենը, ինչ պատմել է Մ. Խորենացին Վաղարշակին նվիրված ավելի քան վեց զրուխներում (գիրք Ա, զլ. Ը, գիրք Բ, զլ. Գ—Ը), սակայն ավելի համառոտ, որքանով թույլ կտային արձանագրելու հնարավորությունները: Սրինակ, ասենք, ինչպես Վարդան պատմիչի մոտ է³⁵ կամ էլ նման մեկ այլ տարբերակ:

Վաղարշակից հետո հիշատակվելու էր նրա որդին ու հաջորդը՝ Արշակ Ա-ը, դարձյալ հիշարժան գործերի համառոտ նշումով (Մ. Խորենացի, գիրք Բ, զլ. ...):

Ահա այս ամենից հետո էր լինելու քննվող հատվածի վերջին՝ շորրորդ պարբերությունը (շորրորդ՝ մեզ հասած շարահրանքով)՝ «Եւ այս են իշխանք (թագաւորք—Ն. Շ.) Պարթևաց...» և այլն, որով ամփոփվել է ազաթանգեղյան արձանագրությունը կամ դրա պատճենը ներկայացնող Բ զլխի շարահրանքը³⁶: Ի դեպ, որ այդ վերջին հատվածը եղել է արձանագրության մեջ, անկասկած է, քանի որ Անանուն Ա-ից անկախ, ինչպես ցույց ենք տվել³⁷, այն վկայակոչել է նաև Վարդան պատմիչը, վկայակոչել է որպես ուրիշի ուղղակի խոսք՝ չակիրտներում առած. «Ես գրեցի Ազաթանգեղս, զի Մեծն Արշակ ունէր շորս ուղիւս.— գառաջինն յազաւորեցոյց Թեաւալացոց և զերկրորդն Լիրիկացոց և զերկրորդն Պարթևաց և զշորրորդն Հայոց՝ աալով նմա սանմանն, զոր Հայկն ստացաւ զաւակօքն իւրով և ուղիով Եօքն զստերաց իւրոց»³⁸: Ի միջի այլոց ասենք, որ Վարդան պատմիչի վկայակոչումն առավել ամբողջական է, առավել հարազատ արձանագրության բնագրին, քան Անանուն Ա-ի մոտ է, որը բերել է (գուցե բիրել են ըստ նրա) վերապատմելով (սա է ցույց տալիս երկու տեղ կրկնված «ասեն» բառը), անգամ որոշ տվյալների անտեսումով: Սակայն կարևորն այն է, որ Վարդանն էլ է նշում Վաղարշակի հիշատակումը ազաթանգեղյան արձանագրության մեջ: Ավելին, նա վիճարկում է Մ. Խորենացու հաղորդումը և ցանկանում ըստ արձանագրությանն ապացուցել, որ Վաղարշակը որդին էր Արշակ Մեծի և ոչ՝ եղբայրը. «Բայց լուար և տեսաք գրով, եթէ որդի էր սա (Վաղարշակը—Ն. Շ.) Արշակ Մեծի և ոչ եղբայր»³⁹: Մի փաստ ևս, որ Վաղարշակը պետք է հիշվեր նաև Անանուն Ա-ի շարահրանքում:

Այսպիսով, ըստ Անանուն Ա-ի ևս ի հայտ են գալիս հայոց և պարթևաց առաջին հինգ թագավորները՝ Արշակ Ա (Քաջ), Արտաշես, Արշակ Բ (Մեծ)՝ պարթևաց, Վաղարշակ, Արշակ Ա՝ հայոց, որոնց քանսկը, ինչպես տեսանք ըստ մարաբասյան մատյանի, ավելին կամ պակաս լինել չէր կարող: Ի հայտ են գալիս նաև դրանց, այսպես ասած, անհայտանալու պատճառները, որոնց ոչ ճիշտ ընկալումը զանազան թյուրիմացությունների տեղիք է տվել:

Ամփոփենք:

ա) Սերեոսի պատմության հետ մեզ հասած Ա և Բ զրուխների հեղինակը, որին կոչում ենք Անանուն Ա, կապ չունի նույն աշխատության մեզ հասած

³⁵ Վարդան Բարձրարեւոյցի, Պատմութիւն տիեզերաց, Մոսկվա, 1861, էջ 44—47 (այսուհետև՝ Վարդան պատմիչ):

³⁶ Անհավանական չէ նաև, որ այս հատվածը եղել է Արշակ Ա-ի գործերից առաջ, ինչպես Վարդան պատմիչի մոտ է (նույն տեղում, էջ 46—47):

³⁷ Լևոն Շահինյան, Նշվ. աշխ., էջ 105—106:

³⁸ Վարդան պատմիչ, նույն տեղում, էջ 46:

³⁹ Նույն տեղում, էջ 46 և նախորդը՝ էջ 44-ից:

Գ, Դ և հաջորդ զլուխների հետ:

բ) Անանուն Ա-ի խոստարանությունը ստ է հասել մի տոթը կորուստով և վրիպակներով:

գ) խոստարանության մեջ նշված աղսթանգեղյան արձանագրության պատճենը Բ զլուխն է, առանց արքայացանկերի:

դ) Արքայադանկերը կազմվել են մասամբ Բ զլխի, իսկ հիմնականում դրան հաջորդած ինչ-որ զլուխների տվյալներով և չետո են կցվել Բ զլխին:

ե) Արքայացանկեր կաղմողը կամ Անանուն Ա-ն է, կամ էլ մեկ ուրիշը՝ ըստ նրա ավանդած տվյալները:

զ) Բ զլխի նախնական շարադրանքը մեղ է հասել ղզալի կորուստներով, տուժել է հատկապես հայոց մասի շարադրանքը:

է) Կորած հատվածների ենթադրյալ վերականգնումը անկասածելի է դարձնում, որ խոստարանության մեջ նշված «հինգ» բառը հետագա վրիպակ է և համապատասխանում է մարաբասյան մատյաստում հիշված պարթևաց՝ և հայոց առաջին թագավորների թվին՝ երեքը պարթևաց (Արշակ Բաջ, Արտաշես, Արշակ Մեծ), երկուսը հայոց (Վաղարշակ, Արշակ Ա):

բ) Անանուն Ա-ի հեղած Արշակ Փոթը կոչվածը շի մտնում այս հնգյակի մեջ, քանի որ, ի վերջո, նրա գահակից եղբայր Վաղարշակն է դարձել Արշակունիների թագավորության հիմնադիրը Հայաստանում:

ОБ ОДНОМ СВЕДЕНИИ АНОНИМА В «ИСТОРИИ» СЕБЕОСА И О СВЯЗАННЫХ С НИМ ВОПРОСАХ

ЛЕВОН ШАГИНЯН

Резюме

Аноним глав А и Б, примыкающих к «Истории» Себеоса, обещает рассказать и о пяти армянских и парфянских царях, которые, однако, в дошедших до нас рукописях не фигурируют. Ряд специалистов предлагает понимать слово пять (*հինգ*) как старый (*հին*). Однако исследования выявляют, что подобная точка зрения ошибочна. Аноним на самом деле имеет в виду пятерых (*հինգ*) парфянских и армянских царей: Аршака Храброго, Арташеса, Аршака Великого—парфянских Аршакидов и Вагаршака, Аршака I—армянских Аршакидов, как у Хоренаци.